ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ (1954—1955)

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո պատմաճարտարապետական հուշարձանների նկատմամբ հոգատարությունն իր ոլորտն ընդգրկեց նաև հայոց հնագույն եկեղեցին՝ ս. Էջմիածնի Մայր տաճարը։ Այն անմիջական իրականացում ստացավ, երբ 1923 թ. դեկտեմբերին փուլ եկան հարավային զանգակատունն ու դրա հիմքը կազմող աբսիդի վերնամասը։ Ակադեմիկոս Ա. Թամանյանի հանձնարարությամբ և Թ. Թորամանյանի անմիջական ղեկավարությամբ վերականգնված աբսիդը եղավ Սովետական Հայաստանի հուշարձանների վերականգնման աշխատանքների առաջին քայլը[1]։ Սակայն հինավուրց տաճարն ամբողջությամբ (որի նորոգման ուղղությամբ նախասովետական տարիներին գործադրած ջանքերն անարդյունք եղան)[2] շարունակում էր մնալ խիստ մտահոգություն պատճառող վիճակում։

Գևորգ Զ կաթողիկոսի գահակալության տարիներին (1945—1954) լուսավորշաղեն հնամյա տաճարի հիմնական վերանորոգման հարցը նորից առաջ քաշվեց։ Այդ ուղղությամբ գործադրած ջանքերն ունեն իրենց նախապատմությունը։ Գևորգ Զ կաթողիկոսի հրավերով Էջմիածին ժամանած հանձնաժողովը, որի կազմում էին բանաստեղծ Ավ. Իսահակյանը, նկարիչներ Մ. Սարյանը և Հ. Կոջոյանը, ճարտարապետներ Ս. Սաֆարյանը, Մ. Գրիգորյանը և Վ. Հարությունյանն ու ինժեներ-կոնստրուկտոր Հ. Սարգսյանը, տեղում հանգամանորեն ծանոթացավ Մայր տաճարի տեխնիկական վիճակին ու միջոցներ ծրագրեց այն արմատապես բարելավելու ուղղությամբ[3]։

Հանձնաժողովի առաջարկով ստեղծված ենթահանձնաժողովը (որի կազմում էին Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ Վ. Հարությունյանը, ճարտարապետներ Ռ. Խրայելյանը և Խ. Ռոստոմբեկյանը, ինժեներ-շինարարներ Ա. Մելիք-Մարտիրոսյանը և Հ. Սարգսյանը), մասնագիտորեն քննելով հարցը, ներկայացրեց լրացուցիչ ու ճշտված առաջարկություններ[4]։ Նույն առաջարկությունների վերջում հրապարակվեց նաև ինժեներ Ա. Ահարոնյանի կազմած՝ Մայր տաճարի վերանորոգման նախահաշիվը (խոշորացված ցուցանիշներով) շուրջ 4 մլն ռ. ընդհանուր արժողությամբ[5]։

Վերը նշված փաստաթղթերի հրապարակմամբ Գևորգ Զ կաթողիկոսը նպատակ էր հետապնդում համընդհանուր ուշադրություն բևեռել լուսավորչաշեն Մայր տաճարի վերանորոգման խնդրին։ Դրան նա անդրադառնում էր բոլոր հարմար առիթներով, ջանում գտնել բարերարներ կամ կատարել հանգանակություն, որպեսզի նյութական միջոցներ հայթայթվեն վերաշինական մեծ

---

1 Այդ մասին տե՛ս Թ. Թորամանյան, Տեղեկագիր Էջմիածնի տաճարի հարավային աբսիդի վրա հնագույն կառուցված զանգակատան հանկարծ փլուզու պատճառով վնասված աբսիդի և ուրիշ փոքր մասերի վերականգնման («Էջմիածին», 1947, մայիս-հունիս, էջ 16—19), Վ. Հարությունյան, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան վերականգնումը (նույն տեղում, 1978, Դ, էջ 53—56)։

2 Վ. Հարությունյան, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին (նույն տեղում, 1976, Ե, Զ, է)։

3 Նույն տեղում, 1946, հունիս-հուլիս, էջ 33—34։

4 Նույն տեղում, էջ 35։

5 Նույն տեղում, էջ 36։

աշխատանքների համար։ 1945 թ. գումարված ազգային-եկեղեցական մեծ ժողովում նա կոչ արեց, որպեսզի մեծահարուստ հայ ազգայիններից մեկը կամ մի քանիսը առնեն տաճարի վերանորոգության գործը ու նրա թելադրանքով ժողովի բանաձևում տրվեց «1642 տարվա պատմական այդ կոթողի կյանքի հարատևության և նրան վայելուչ վիճակում պահելու գործը հայ ժողովրդի պատվի գործն է» ձևակերպումը[6]։ Նույն նպատակին էին ծառայում Մայր տաճարի վերանորոգման հարցին առնչվող մի քանի հոդվածների տպագրումը «էջմիածին» ամսագրում։ Դրանց թվին են պատկանում Թ. Թորամանյանի «Տեղեկագիր էջմիածնի տաճարի հարավային աբսիդի վրա հնագույն կառուցված զանգակատան հանկարծ փլչելու պատճառով վնասված աբսիդի և ուրիշ փոքր մասերի վերականգնման»[7], «էջմիածին»[8], Տարագրոսի «Մի քանի խոսք էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման մասին»[9], Վ. Սուրենյանցի «Սուրբ էջմիածնի վեղուշինության խնդիրը»[10] հոդվածները և այլ նյութեր։

Ներունազարդ հայրապետի մտահոգությունը հիմնավոր էր։ Նրան չվիճակվեց իրականացված տեսնել տարիներով փայփայած իր իղձը, սակայն Սովետական Հայաստանի կառավարությունը, ընդառաջելով կաթողիկոսի խնդրանքին, 1954 թ. որոշում ընդունեց ձեռնարկել ս. էջմիածնի Մայր տաճարի վերանորոգության գործը՝ հանձն առնելով հոգալ դրա հետ կապված բոլոր ծախսերը և ապահովել պահանջվող շինանյութերի հայթայթումը։

Այդ ուղղությամբ միջոցառումներն արագ ընթացք ստացան Գևորգ Զ կաթողիկոսի մահվանից (1954 թ. մայիսի 8) հետո, քանի որ հաջորդ տարի պիտի դումարվեր ազգային-եկեղեցական մեծ ժողովը՝ նոր կաթողիկոս ընտրելու համար։

Նախապատրաստական աշխատանքներ։ Գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետության գործերի վարչության (պետ՝ Ռ. Ազիզբեկյան) և Հայ եկեղեցու գործերի խորհրդի (նախագահ՝ Հ. Գրիգորյան) վրա։ Վերանորոգման և բարեկարգման աշխատանքների ընդհանուր ծրագիրը նախապես քննարկվեց։ Դրան էր նվիրված ճարտարապետության գործերի վարչության 1954 թ. ապրիլի 19-ին կայացած ընդլայնված նիստը, որն ընդունեց հետևյալ որոշումը[11]. «Վանքատարածության բարեկարգման վերաբերյալ

1. Քանդել-վերացնել գոյություն ունեցող հին պատերը (Տրդատյան դարպասից հյուսիս, արևելակողմինը և այն, որ անցնում է Աթարբեկյան փողոցի և սինոդի նախկին շենքի միջև) ու փոխարինել նոր պատերով։

2. Քանդել Տրդատյան դարպասից հյուսիս ընկած հողաշեն և խարխլված շենքերը և այդ դարպասից առաջ վերացված շենքերի տեղում կառուցել հենապատ։

3. Բակի հարավ-արևելյան մասի դեպի տաճարն ուղղված շենքի խուլ պատերը երեսապատել՝ դարձնելով համապատասխան նախկին սեղանատան նակատին։

---

6 «Ներչանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Սրբազնագույն կաթողիկոսի իղձերն ու ցանկությունները ս. էջմիածնի Մայր տաճարի վերանորոգության վերաբերյալ» (նույն տեղում, 1955, մարտ, էջ 6—7)։

7 Նույն տեղում, 1947, մայիս-հունիս, էջ 16—19։

8 Նույն տեղում, 1948, հունիս-հուլիս, էջ 49—50։

9 Նույն տեղում, 1946, հունիս-հուլիս, էջ 37—40։

10 Նույն տեղում, 1947, հունվար-փետրվար, էջ 35—39։

11 Նիստին, բացի խորհրդի անդամներ Ռ. Ազիզբեկյանից, Վ. Հարությունյանից, Հ. Բաբայանյանից, Լ. Բաբայանից (գիտ. քարտուղար), Մ. Գրիգորյանից, Ռ. Իսրայելյանից, Հ. Մարգարյանից, Ս. Սաֆարյանից և Մ. Սարյանից, մասնակցում էին Կ. Հովհաննիսյանը, գրողներ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը և Ստ. Զորյանը, Հայ եկեղեցու խորհրդի նախագահ Հ. Գրիգորյանը, հնագետ Կ. Ղաֆադարյանը, նկարիչ Գ. Գյուրջյանը, ճարտ. Լ. Սադոյանը և ուրիշներ (էջմիածնի Մայր Աթոռի շինդրասենյակի արխիվ, գ. 16, թ. 46—50)։

4. Կատարել Էջմիածնի տաճարի ողջ շրջակա տարածության բարեկարգում, իրականացնել աշխատանքներ՝ մայթերի վերանորոգման, էլեկտրական լուսավորության և կանաչապատման ուղղությամբ։

Մայր տաճարի վերանորոգման ուղղությամբ

1. Ամրացնել տաճարի մույթերը և թաղերը,
2. Վերանորոգել տաճարի կտուրի քարածածկը,
3. Սալարկել հատակը տուֆասալերով,
4. Վերականգնել տաճարի որմնանկարները,
5. Նախագծել տաճարի էլեկտրական լուսավորման համակարգ,
6. Նախատեսնել Էջմիածնի վանքի բոլոր շենքերի ջեռուցում և ջրահեռացում (կոյուղավորում)։

Հին վեհարանի վերաբերյալ

1. Ամրացնել առաջին հարկի պատերը,
2. Հողածածկ հարթ կտուրը փոխարինել երկլանջ թիթեղապատ կտուրով,
3. Երեսապատել ճակատները տուֆասալերով»։

Մինչ տաճարի ամրացման և վերանորոգման նախագծի մշակումը կարիք զգացվեց մեկ անգամ ևս մի մասնագիտական հանձնաժողովի միջոցով ավելի հանգամանորեն ստուգել Մայր տաճարի տեխնիկական վիճակը։ Այդ կապակցությամբ 1955 թ. մարտի 12-ին Էջմիածին գործուղվեց 5 հոգուց բաղկացած մասնագիտական մի հանձնաժողով (նախագահ՝ Կ. Հովհաննիսյան, անդամներ՝ ճարտարապետ Վ. Հարությունյան, ինժեներներ Ա. Մելիք-Մարտիրոսյան, Կ. Ալթունյան և Վ. Ստեփանյան), որի եզրակացությունը ստորև բերում ենք ամբողջությամբ. «1. Որոշ տեղերում սվաղը հեռացնելու միջոցով կոնստրուկցիաների (մույթերի, կամարների) նախնական հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանցում կան վտանգավոր ճեղքեր, որոնք սպառնում են տաճարի կայունությանը։ Առանձնապես վտանգավոր վիճակում են գտնվում գմբեթակիր մույթերը։

2. Չնայած նրան, որ նշված վիճակի հիմնական պատճառը հանդիսացել են տանիքից ծծվող ջրերը, այդուամենայնիվ, մինչև հիմա նրա վերանորոգման ուղղությամբ ոչ մի միջոցառում չի ձեռնարկված, այն ժամանակ, երբ տաճարի ներսում սկսված են որմնանկարների ռեստավրացիայի աշխատանքները։

3. Կան նաև որոշ դեֆորմացիաներ՝ տաճարի հյուսիսային, արևմտյան և հարավային պատերում։

Ելնելով վերոհիշյալից, հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ են ներքոհիշյալ նախնական միջոցառումները.

1. Կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը վերջնականապես պարզելու համար պետք է՝

ա) մաքրել սվաղը մույթերից և կամարների ու թաղերի այն մասերից, որոնք չեն ծածկված որմնանկարներով։ Սվաղի հեռացման աշխատանքը կատարել համապատասխան մասնագետների հսկողությամբ, որպեսզի սվաղի տակ պահպանված ավելի հին որմնանկարների մնացորդները չոչնչանան։

բ) տաճարի հյուսիսային, հարավային և արևմտյան պատերի տակ, հանձնաժողովի նշած տեղում, փորել տալ շուրֆեր՝ հիմքերի վիճակը հետազոտելու համար։

գ) Փորել տալ մեկ շուրֆ՝ նաև հարավ-արևմտյան մույթի տակ։

դ) Երկրաբան մասնագետի միջոցով կատարել հիմնատակի ինժեներաերկրաբանական հետազոտություն։

Նշված աշխատանքները կատարել հինգ օրվա ընթացքում, որից հետո հանձնաժողովը հնարավորություն կունենա ներկայացնելու իր վերջնական եզրակացությունը՝ Մայր տաճարի վերանորոգման հիմնական ուղղության վերաբերյալ։

Հանձնաժողովը գտնում է, որ ժամանակավորապես պետք է դադարեցվեն

Մայր տաճարի որմնանկարների վերականգնման աշխատանքները, ինչպես և եկեղեցական արարողությունները»[12]։

Ավելի մեծ կազմով մի այլ հանձնաժողովի կողմից 1955 թ. մարտի 18-ին տեղում կատարված լրացուցիչ ուսումնասիրություններից հետո արված եզրակացությունները լայն քննության ենթարկվեցին նույն օրը՝ Երևանում։ Խորհրդակցությունը վարող Կ. Հովհաննիսյանն այսպես է ամփոփել քննարկման արդյունքները[13]. «1. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթակիր չորս մույթերը ամրացնել, պատելով նրանց երկաթ-բետոնե շապիկով (кожух-ով)։ Սվաղը պոկել հեղթականությամբ, հեղուկ շաղախով կատարել մույթերի ներարկում։

2. Կամարների հարցը (ամրացնել նրանց լրացուցիչ կամարով, թե ոչ) թողնել կոնստրուկտորների հայեցողությանը և նրանց կարծիքը լսել խորհրդի նիստում։

3. Հիմքերը թողնել նույնությամբ, առանց դրանք ամրացնելու։

4. Վերանորոգման աշխատանքներին զուգընթաց անմիջապես սկսել կտուրի ծածկի վերանորոգումը։

5. Մույթերի և կամարների անհրաժեշտ տեղերում կատարել շաղախի ներարկում։

6. Թույլատրել նկարիչներին՝ շարունակելու իրենց աշխատանքները չոր տեղերում»[14]։

Կատարվելիք աշխատանքների ընդհանուր ծրագիր ընդունելուց հետո նախագծերի մշակումը հանձնարարվեց նախագծային կազմակերպությունների, որոնցում ստեղծվեցին մասնագիտական երկու խումբ՝ մեկը վանքի հյուսիսային և արևելյան պարսպապատերի, մյուսը՝ Մայր տաճարի կոնստրուկտիվ տարրերի (մույթերի, կամարների) ամրացման և ընդհանուր վերանորոգման նախագծերի մշակման համար։ Առաջինի կազմի մեջ էին պրոֆ. Ս. Սաֆարյանը (ղեկավար), ճարտարապետներ Ռ. Իսրայելյանը, Ս. Գուրզադյանը, Լ. Սադոյանը, իսկ երկրորդի՝ ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, ինժեներներ Կ. Ալթունյանը և Բ. Դանոյանը։ Տաճարի ներսի պատերի որմնանկարների մաքրման, ամրացման և լրացման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը հանձնարարվեց հայ մանրանկարչության և որմնանկարչության ճանաչված մասնագետ Լ. Դուրնովոյին։

Ընդհանուր ծրագիրն ընդունելուց մի քանի ամիս անց, 1955 թ. հունիսի 7-ին ճարտարապետական գործերի վարչության խորհրդի ընդլայնված նիստում քննության առնվեց ու մասնակի դիտողություններով հաստատվեց վանքատարածության հյուսիսային պարսպապատի՝ պրոֆ. Ս. Սաֆարյանի գլխավորած հեղինակային խմբի մշակած նախագիծը։ Հին վեհարանի և Մայր տաճարի վերանորոգման հարցերում որոշ չափով վերանայվեցին նախորդ նիստում ընդունված առանձին կետերը[15]։

Հյուսիսային պարսպապատը պիտի ծառայեր վանքատարածությունը քաղաքային այգուց անջատելուն։ Նախագծային խումբը միանգամայն իրավացիորեն պատի երկու երեսներին տարբեր մշակում էր տվել։ Եթե հարավային ճակատը մշակված էր իրար հաջորդող խորշերի շարքով, որոնցում պիտի խաչքարեր տեղադրվեին, ապա հյուսիսային կողմից պարսպապատն օժտված էր քարակերտ տաղավարներով՝ առևտրական նպատակներով օգտագործելու համար։ Թեև նախատեսվում էր դեպի վանքի բակը հիմնական մուտք տալ արևելյան կողմից, սակայն, համենայնդեպս, մի դարպաս էլ թողնվեց հյուսիսային պարսպապատում (որը հետագայում պսակվեց ժամացույցի աշտարակով)։

Պարսպապատի կառուցմամբ սկսված աշխատանքները հաջորդ տարվանից

12 Նույն տեղում, թ. 37—38։

13 Քննարկմանը մասնակցել են տարբեր մասնագիտությունների պատկանող 13 հոգի, ինչպես և Հայ եկեղեցական խորհրդի նախագահ Հ. Գրիգորյանը (նույն տեղում, թ. 31—36)։

14 Մինչ այդ, որմնանկարների վերականգնման աշխատանքներն սկսված էին։

15 Էջմիածնի Մայր Աթոռի շինգրասենյակի արխիվ, գ. 16, թ. 41—45։



Նկ. 1. Մայրավանքի նորակառույց հյուսիսային պարսպապատը։

ծավալվեցին նաև Մայր տաճարում՝ ընթանալով երեք հիմնական ուղղություններով։ 1955 թ. հունվարից նախ սկսվեց որմնազարդումը և մի քանի ամիս հետո միայն, դրան զուգահեռ ու միաժամանակ, ներսում և կտուրի վրա ձեռնարկվեցին շինարարական աշխատանքները։ Ստորև, նույն հաջորդականությամբ էլ կատարում ենք դրանց ընդհանուր բնութագրումը։

Որմնանկարների վերականգնում և լրացում։ Մայր տաճարի որմնանկարների վիճակը, ըստ աշխատանքների ընդհանուր ղեկավար Լ. Դուրնովոյի բացատրագրի, ներկայացնում էր հետևյալ պատկերը. «Նկարիչներ Նաղաշ և Հովնաթան Հովնաթանյաններն ու իրենց աշակերտները 1780—1786 թթ. Սիմեոն Երևանցի և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսների պատվերով որմնազարդել են Մայր տաճարի ներսը։ Գմբեթը, թմբուկը, հարակից մասերը, բոլոր թաղերը, չորս սուրբ գաստներն ու աբսիդների գմբեթարդները և կամարները (տակից ու հակատային երեսներից) խտորեն զարդարված էին զորգային բնույթի հարուստ, բազմերանգ ու ոսկեզօծ զարդանախշերով։

Կրոնապաշտամունքային բովանդակությունից զուրկ, զուտ դեկորատիվ միտումներով կատարված և ուշ միջնադարյան իրանական որմնանկարչության ազդեցությանը բնորոշ զարդանախշերը, տաճարի վերնամասի նշված մակերևույթներն ու հարթությունները ծածկելով հանդերձ, միևնույն ժամանակ, ըստ հորինվածքի, համապատասխանում են յուրաքանչյուր տեղին, սերտ կապի մեջ են կոնստրուկտիվ ձևերի հետ։

Տաճարի որմնանկարների ընդհանուր մակերեսը մոտավոր հաշիվներով կազմել է 2500 քմ., որից պահպանվել էր կեսից պակաս՝ շուրջ 1000 քմ։ Մնացածը տևական խոնավության ու ծեփի քայքայման պատճառով գտնվում էր կիսաեղծված վիճակում կամ ծածկվել էր սպիտակ ներկով, սակայն պահպանված հետքերով հնարավոր էր վերականգնել իր նախկին հորինվածքով ու գունային լուծմամբ»[16]։

---

16 Հայկական ՍՍՀ հանրապետական նախագծային ինստիտուտի (այժմ՝ Հայարդնախագիծ) արխիվ, ինվ. 5995, պատվ. 109 (54)։

Համաձայն նույն բացատրագրի, վերականգնման աշխատանքներն անհրաժեշտ էր տանել երկու ուղղություններով. ա) ներկերի թափված կամ եղծված մասերում (գմբեթներում, թմբուկներում, սոսգաստներում և 4 կամարներում) որմնազարդերի վերականգնում՝ շուրջ 14 քմ մակերեսով։ բ) Որմնազարդերից իսպառ ղրկված տեղերում լրացումներ կատարել նոր մանրամասներով կամ ամբողջական հորինվածքներով՝ օգտվելով համապատասխան տեղերում պահպանված մոտիվներից։ Արևմտյան գմբեթարդում պահպանված որմնազարդերը նույնությամբ պիտի կատարվեին մնացյալ գմբեթարդներում, առաստաղների աստղաղարդերը կրկնվեին բացակայող տեղերում և այլն[17]։

Այսպիսով, կատարված ուսումնասիրության տվյալներով պահպանված որմնազարդերը հնարավորություն էին ընձեռում լիովին ու առանց էական աղավաղումների վերստեղծել Հովնաթանյանների խոշորապլան և մեծ վարպետությամբ իրականացված մտահղացումը։ Դրա համար, ըստ բացատրագրի, պահանջվում էր չորս ամիս ժամանակ, սկսած ապրիլից, երբ հնարավոր լիներ չջեռուցվող տաճարի ներսում աշխատանքներ ծավալել։ Չնայած դրան, սեղմ ժամկետներով թելադրված՝ որմնանկարների մաքրման աշխատանքները սկսվեցին 1955 թ. հունվարից։ Նույն ամսի 25-ին մի ենթահանձնաժողով՝ բաղկացած Հ. Գրիգորյանից, Կ. Հովհաննիսյանից, Լ. Դուրնովոյից, նկարիչներ Հ. Կարալյանից և Գ. Խանաղյանից, տեղում ծանոթանալով կատարվածին, արձանագրեց, որ մաքրումից հետո պահպանված որմնազարդերի մակերեսը մոտավորապես կազմում է ամբողջի 20—25%-ը և մաքրված մասերի լրացումը պիտի դիտվի որպես նոր կատարված[18]։ Մեկ ուրիշ ենթահանձնաժողով (Ռ. Ազիզբեկյան, Հ. Գրիգորյան, Մ. Սարյան, Ռ. Դրամբյան, Ա. Կարալյան և Կ. Հովհաննիսյան) քննարկեց ու հավանություն տվեց տաճարի գլանաձև թաղերի և գլխավոր աբսիդի որմնազարդերի վերականգնման՝ Լ. Դուրնովոյի կազմած էսքիզներին ու արեց որոշ առաջարկներ[19]։ Այնուհետև տաճարի որմնանկարների վերականգնման ու լրացման աշխատանքները հետզհետե ընդարձակվեցին, այդ գործում ներգրավելով նկարիչների մի մեծ խումբ, որի փոփոխվող կազմում մտնում էին Լ. Մանասերյանը, Հ. Ղարագյոզյանը, Ք. Հովումյանը, Հ. Սիրավյանը, Գ. Խանաղյանը, Է. Կորխմազյանը, Գ. Շահբազյանը, Վ. Բաղդասարյանը, Լ. Բաղդասարյանը, Վ. Կարապետյանը, Վ. Խորենյանը, Ա. Սարգսյանը, Վ. Կաժոյանը, Ռ. Ղազարյանը, Տ. Շխուկովան, Ճարտարապետ Հր. Հակոբյանը և ուրիշներ։ Որմնազարդերի վերականգնումը և լրացումը կատարվում էր բարձրորակ յուղաներկով։

Ճարտարապետական գործերի վարչության խորհրդի 1955 թ. մարտի 23-ի կայացած ընդլայնված նիստում Լ. Դուրնովոն, հաղորդում տալով որմնազարդերի վերականգնման ընթացքի մասին, պահանջեց ճշտել և լրացնել մակերեսների քանակը (քանի որ նախնական հաշվարկները կատարվել էին ոչ թե մանրամասն չափագրությունների, այլ գծագրերի տվյալներով)։ Այնուհետև նա հայտնեց, որ 2500 քմ մշակման ենթակա ընդհանուր մակերեսից աշխատանքներն ավարտվել են 500 քմ մակերեսի վրա և նույնչափ մակերեսի վրա էլ աշխատանքները շարունակվում են։ Որմնազարդերի վերականգնումն ու լրացումը ժամանակին ավարտելու համար պահանջվում էր 15-ով ավելացնել նկարիչների թիվը[20]։ Գ. Տեր-Հովհաննիսյանն այսպես է նկարագրել նկարիչ-վերականգնողների ջանադիր աշխատանքը։ «Պետք է տեսնել,— գրել է նա,— թե այդ երիտասարդները ինչպիսի սիրով ու ակնածանքով են աշխատում առավոտից մինչև երեկո։ Ինչպիսի ուշադրությամբ, մանրակրկիտ աշխատանք և հոգատար վերաբերմունք է պետք, որպեսզի դարերի ընթացքում իրենց գույնը կորցրած մանրանկարների (որմնանկարների—Վ. Հ.) պատառ-

17 Նույն տեղում։

18 Էջմիածնի Մայր Աթոռի ջինդրասենյակի արխիվ, գ. 16, թ. 40։

19 Նույն տեղում, թ. 41։

20 Նույն տեղում, թ. 22—23։

ները կամ թե ամբողջովին մերկ կամարներն ու սուսստաղները կրիին կեն-դանանան, վառ դույներ ստանան, ժպտան նոր փայլով։

Եվ նկարիչների վարժ վրձիններ հպումով իրոք կենդանանում, կյանք է առնում հայ մանրանկարչության լավագույն վարպետների՝ Հովնաթանյանների անգնահատելի աշխատանքը»[21]։



Նկ. 2. Մայր տաճարի գմբեթը որմնանկարների վերականգնումից հետո։

Գործի կազմակերպիչների կողմից որմնանկարների վերականգնման աշխատանքների նկատմամբ ցուցաբերած բացառիկ ուշադրության մասին է վկայում հեղինակավոր մասնագիտական հանձնաժողովների մշտական հսկողության իրականացումը, որի ժամանակ արվում էին արժեքավոր դիտողություններ ու տրվում խորհուրդներ և այլն։ Միևնույն ժամանակ լրացուցիչ վերականգնման աշխատանքներ կատարվեցին զանգակատան առաջին հարկի ա-

21. Գ. Տեր-Հովհաննիսյան, Մայր տաճարի վերականգնման աշխատանքների ընթացքը («Էջմիածին», 1955, մայիս, էջ 27—28)։

ռաստաղի, հին վեհարանի ծաղկազարդ դահլիճի որմնանկարների մաքրման ու թարմացման, ինչպես և տաճարի ներսում ու ծաղկազարդ դահլիճում որմնազարդերից աղտ հարթությունները գունազարդելու ուղղությամբ։ Հավարտ բոլոր աշխատանքների, նույն տարվա օգոստոսի 28-ին Մ. Սարյանի նախագահությամբ մի հանձնաժողով (Ավ. Իսահակյան, Ս. Սաֆարյան, Կ.Հովհաննիսյան, Լ. Սադոյան և Հ. Կարալյան) կատարեց վերջնական ընդունում։ Այդ մասին արձանագրության մեջ նշված է՝ «Լ. Դուրնովոյի ղեկավարած նկարիչների խմբի կողմից Էջմիածնի Մայր տաճարի ներսում կատարած որմնանկարների վերանորոգումը համարել ընդունված լավ գնահատականով...»[22]։ 1955 թ. սեպտեմբերին առանձին տեղերում կատարվեցին որոշ լրացումներ։ Դրանով Մայր տաճարի որմնազարդերի մաքրման, վերականգնման ու լրացման աշխատանքները լիովին ավարտվեցին։

Կոնստրուկցիաների ամրացման, կտուրը ծածկելու և վերաշինական այլ միջոցառումներ։ Սահմանված խիստ կարճ ժամկետները թելադրեցին տաճարը կրող կոնստրուկցիաների ամրացման նախապատրաստական աշխատանքները ծավալել մինչև նախագծային-նախահաշվային փաստաթղթերի կազմումն ու վերջնական հաստատումը։ Շինարարական աշխատանքների կատարումը (ինչպես վանքատարածության հյուսիսային պարսպապատի կառուցումը) հանձնարարվեց Հայկական ՍՍՀ քաղաքային և գյուղական շինարարության մինիստրության հատուկ շինարարության 8-րդ տրեստին (կառավարիչ՝ Ա. Զորաբյան), որն իր հերթին աշխատանքների ղեկավար նշանակեց ինժեներ Ս. Մուսայելյանին։

Մինչ քննարկվում էին կրող կոնստրուկցիաների ամրացման և կտուրը ծածկելու նպատակահարմար տարբերակները, շինարարները տաճարի ներսում կապեցին նոր փայտամածներ ու սկսեցին մույթերից և կամարների տակից ծեփի հեռացումը։ Դրա շնորհիվ լիովին բացահայտվեց տաճարի ծածկը կրող կոնստրուկտիվ համակարգի վնասվածությունը և մույթերում ու կամարներում վտանգավոր ճեղքերի առկայությունը։ Միանգամայն անվիճելի էր, որ անհրաժեշտ է կիրառել դրանց հուսալի ամրացման միջոցառումներ։ Կարծիքները բաժանվեցին միայն սկզբունքների հարցում։ Մասնագետներից ոմանք (այդ թվում տողերիս հեղինակը) գտնում էին, որ հնարավոր է ամրացումը կատարել առանց մույթերի հորիզոնական կտրվածքի չափերում և կամարների շառավիղներում փոփոխություններ առաջացնելու, այսինքն՝ ամրացման նպատակով մուծվող մետաղական տարրերը տեղավորելու մույթերի և կամարների առկա գաբարիտների սահմաններում[23]։ Տարակարծություններ կային նաև կտուրի ծածկի վերաբերյալ։ Ջնհալից ու անձրևաջրից ներծծվող խոնավությունը դարերի ընթացքում հանդիսացել է այս հնամենի տաճարի խոցելի տեղը, վնասել ծածկերն ու պատերը, վերջիններիս վրայի որմնազարդերը։ Այդ է պատճառը, որ վերաշինական աշխատանքների ընդհանուր ծրագրում կտուրը գրավում էր առաջնակարգ տեղերից մեկը։ Առավել հուսալի էր համարվում կտուրի բոլոր լանջերի թիթեղապատումը։ Թեև սկզբում այս առաջարկն առարկության հանդիպեց (ոմանք գտնում էին, որ խոնավությունը կարելի է կանխել եղած սալածածկը հիմնովին ու բարձրորակ վերանորոգելով), բայց հաշվի առնելով լանջերի փոքր թեքությունները (որի պատճառով խոնավության ներծծումը նորոգումից հետո էլ հնարավոր էր), ընդունվեց թիթեղապատման առաջարկը[24]։

Մույթերի և կամարների ամրացման (հեղինակ՝ Կ. Ալթունյան, կոնստ-

---

22 Էջմիածնի Մայր Աթոռի շինգրասենյակի արխիվ, գ. 16, թ. 19։

23 Այս հարցերին, ինչպես նաև կատարվող աշխատանքների ընթացքին վերաբերող քննարկումը տեղի է ունեցել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետության գործերի վարչության խորհրդի 1955 թ. մայիսի 23-ին կայացած նիստում, որի ժամանակ գործնական առաջարկներ են արվել մշակվելիք նախագծերի վերաբերյալ (նույն տեղում, գ. 16, թ. 23—30)։

24 Նույն տեղում, թ. 15—18։



Գծ. 3. Մայր տաճարի գմբեթակիր մույթերի և կամարների ամրացման նախագիծ։

ղուկցիաների մշակում՝ Ժ. Բեյլերյան) և կտուրի թիթեղապատման (հեղինակ՝ Բ. Դանոյան, Յու. Դալլաքյան) նախագծերը ճարտարապետության գործերի վարչության խորհրդի նիստում 1955 թ. մայիսի 29-ին մեկ անգամ ևս քննության առնվեցին, որի ժամանակ հեղինակներին լրացուցիչ առաջարկներ արվեցին։ Դրանց հիման վրա կատարված որոշ ճշտումներից հետո նախագծերը ռեցենզավորման ենթարկվեցին ինժեներներ Վ. Փինաջյանի, Զ. Հացագործյանի և Հ. Սարգսյանի կողմից ու նկատի առնելով վերջիններիս ընդհանուր առ-

մամբ դրական կարծիքները, ճարտարապետության գործերի վարչության կոլեգիայի ապրիլի 9-ի նիստում վերջնականապես հաստատվեցին[25]։

Մայր տաճարի հարատևությունն ապահովող միջոցառումների մշակման ու դրանց քննարկման փուլերում գիտական մեծ զգուշավորություն ու բազմակողմանի ուշադրություն ցուցաբերվեց։ Այդպիսի վերաբերմունքը հնարավոր դարձրեց որոնել և գտնել խնդրի նպատակահարմար լուծման միջոցներն ու դրանք արտահայտել հավանության արժանացած նախագծում[26]։ Համաձայն նախագծի, մույթերի ամրացումը պիտի կատարվեր պողպատյա ցանցկեն պատյանի օգնությամբ, որով գոտկվելու էին մույթերի բոլոր հարթությունները՝ վերից վեր, մինչև գլխավոր և երկրորդական կամարների տակի գոտիները։ Նախապես մույթերի ճեղքերն ու ներսի դատարկությունները պիտի հեղուկ շաղախով ներարկվեին, այդ միջոցով վերականգնելով հին շարվածքի մոնոլիտությունը։ Դրանից հետո հատակագծում խաչաձև մույթերի բոլոր 12 անկյուններում պիտի դրվեին 150×12 մմ կտրվածքով պողպատյա անկյունակներ ու իրար հետ կապվեին միմյանցից 0,5 մ հեռավորությամբ զոդված 60×8 մմ կտրվածքով շերտային պողպատներով։ Բացի նշված միջոցառումներից, նախատեսվում էր մույթերի 4 ելուստների սկզբներում բացել տարանցիկ անցքեր ու գրանցում մտցրած ձգանների միջոցով ապահովել պատյանների պահանջվող կոշտությունը[27]։ Վերը նշված միջոցներն իրականացնելուց հետո պողպատյա կմախքը պատվեց համատարած մետաղական ցանցով ու տորկրետացման (ցեմենտանետման) ենթարկվեց։ Այսպիսի «հագուստով» օժտելու հետևանքով մույթի չափերը հորիզոնական կտրվածքում բոլոր կողմերից (բացառությամբ գմբեթատակ քառակուսու) աճեցին ընդամենը 7 սմ-ով։ Այն կապակցությամբ, որ գմբեթակիր 4 կամարների տակ (դրանց նեցուկ ծառայելու համար) դրվեցին երկաթբետոնե կամարներ (25—30 սմ բարձրությամբ), դրանց հենարաններ ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով, կամարների տակ մույթերի այդ խաչքերին նույն հաստությամբ կցվեցին երկաթբետոնե կանգնակներ։ Սրանք տաճարի հատակի տակ կապվեցին երկաթբետոնե գոտիներով։ Այսպիսով, տաճարի մույթերի և կամարների ամրացման նպատակով իրականացված երկաթբետոնե հավելվածքը, քարակերտ կրող կոնստրուկցիաներին նեցուկ ծառայելով հանդերձ, միևնույն ժամանակ, դրանց հետ միասին սկսեց «աշխատել» որպես կոշտ շրջանակ՝ տարածական միասնական կոնստրուկտիվ համակարգ։

Պետք է գոհունակությամբ նշել, որ ինժեներ-կոնստրուկտոր Կ. Ալթունյանի և նրա օգնական Ժ. Բեյլերյանի ընդհանուր առմամբ պարզ, բայց նպատակահարմար մտահղացումը, իրենց իսկ ամենօրյա հսկողության ներքո, տեղում ամենայն բարեխղճությամբ իրականացվեց՝ շնորհիվ աշխատանքների ղեկավարներ՝ ինժեներներ Ա. Մուսայելյանի և Զ. Մելյոերյանի, մետաղական կոնստրուկցիաների աշխատանքների ղեկավար՝ ինժեներ Ն. Բիագլովի ու մի մեծ խումբ բանվորների, այդ թվում Ա. Արաբյանի, Վ. Շահինյանի և Խ. Կարապետյանի ջանքերի[28]։

Կոնստրուկցիաների ամրացման միջոցառումների ավարտման վերջում բոլոր հարթությունները ծածկվեցին գաջի ծեփով, որը չորանալուն պես լրացուցիչ որմնազարդման ենթարկվեց։ Այնուհետև որմնազարդերից ազատ պա-

---

25 Նույն տեղում, թ. 9—14։

26 Հանրապետական նախագծային ինստիտուտի արխիվ, ինվ. 6746, պատ. 109/54, թվագրված 1955 թ. ապրիլի 22-ով (մի օրինակը գտնվում է էջմիածնի Մայր Աթոռի շինգրասենյակի արխիվում՝ № 25)։ Ստորագրված է ինստիտուտի դիրեկտոր Մ. Գրիգորյանի, գլխ. ինժ. Մ. Սահակյանի և նախագծի գլխ. ինժ. Լ. Սադոյանի կողմից։ Նախագծի տակ դրված են նաև ինժ. Կ. Ալթունյանի, ճարտ. Ռ. Իսրայելյանի և ինժ. Ժ. Բեյլերյանի ստորագրությունները։

27 Նկատի ունենալով նշված տարանցիկ անցքերի բացման դժվարությունները, այդ կապերը դրվեցին դրսի կողմից՝ անկյունները շրջանցելով ուղիղ գծով։

28 Գ. Տեր-Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 27։

տի հարթությունները (որմնազարդված մասերից ներքև գտնվող գոտուց մինչև հատակը) ծածկվեցին համապատասխան գույնի յուղաներկով՝ գունային ներդաշնակություն ստեղծելով տաճարի ներսում[29]։ Զուգահեռաբար նորոգվեցին զանգաշտարակի ներսի և հին վեհարանի «ծաղկյա» դահլիճի որմնաղարդերը։

Տաճարի ներսում կատարվեցին նաև շինարարական մի շարք այլ աշխատանքներ։ Նախքան որմնազարդումը, ամրացման մասնակի միջոցառումներ կիրառվեցին նաև տաճարի առաստաղում՝ հարավ-արևելյան և հյուսիս-արևմտյան, նախկինում նորոգված, աղյուսաշեն (փայտե ներդիրներով) խաչաձև թաղերում։ Այդ կատարվեց առանց առաջինում կառուցվածքի փոփոխության, իսկ երկրորդը ներքևից պատվեց երկաթյա ցանցով ու ծեփվեց՝ պահպանելով թաղի նախկին ձևը[30]։ Հետազոտական բնույթի պեղումներ կատարելուց հետո, տաճարի ամբողջ հատակը սալարկվեց տուֆաքարով, իսկ չորս մույթերի միջև ընկած տարածությունը (շուրջ 100 քմ մակերեսով)՝ հայկական փարդագույն մարմարով։ Այդ աշխատանքները մեծ խնամքով կատարեց վարպետ Ա. Արարյանը։ Հիմնովին վերակառուցվեց նաև տաճարի էլեկտրական լուսավորման համակարգը (հեղինակներ՝ ինժեներներ Ա. Մնացականյան և Է. Մարտիրոսյան)։ Գմբեթի թմբուկի ներքին պատշգամբում դրվեցին լուսավորման 60 կետ, տաճարի ներսում և թանգարանում կախվեցին 12 ջահ, մույթերի անկյուններում տեղադրվեցին Ռ. Իսրայելյանի էսքիզներով պատրաստված 48 կերոն և այլն[31]։

Զուգահեռաբար ընթացան կտուրի վերանորոգման աշխատանքները։ Թիթեղապատման սկզբունքը ընդունելու և համապատասխան նախագիծը հաստատելու ժամանակ հարց առաջացավ՝ պահպանե՞լ արդյոք, նախկին սալածածկը, թե կտուրի քաշը թեթևացնելու նպատակով այն վերացնել։ Երբ մասնագետների կատարած հաշվարկների միջոցով պարզվեց, որ տաճարի հիմնական կրող կոնստրուկցիաների՝ մույթերի և կամարների, ամրացումից հետո կտուրի սալածածկի քաշը վտանգ չի կարող սպառնալ, որոշվեց նախորոք վերանորոգման ենթարկել սալածածկը, ապա թիթեղապատել ողջ կտուրը (բացի գմբեթների մեծ թեքություններ ունեցող վեղարները)։ Սալածածկի վերանորոգումը կատարվեց տեղ-տեղ քայքայված շարքերի վերաշարման, իսկ մնացած մասերում՝ կարանները մաքրելու և դրանք ցեմենտի հեղուկով ներարկելու միջոցով[32]։ Դրանից հետո բոլոր լանջերը փայտյա շինանյութով համատարած կավարման ենթարկվեցին ու ծածկվեցին ցինկապատ թիթեղով (նույն ձևով թիթեղապատման ենթարկվեց նաև հին վեհարանի կտուրը՝ նախապես հեռացնելով նրա հին ծածկը կազմող հաստ հողաշերտը)[33]։

Միևնույն ժամանակ ավարտվեցին տաճարի շրջապատի մույթերի սալածածկի նորոգումը, մայրավանքի տարածքն ամփոփող հյուսիսային (180 մ երկարությամբ ու 5 մ բարձրությամբ) և արևելյան (130 մ երկարությամբ և 3 մ բարձրությամբ) պարսպապատերի և դրանցում դարպասների շինարարությունը։ Հիմնովին վերանորոգվեց նաև հին վեհարանը։ Բացի կտուրից, նորոգվեցին կաթողիկոսի աշխատասենյակը, «ծաղկյա» դահլիճը, ընդունարանը, նախասենյակները և կից սենյակները։

---

29 Գույնի ընտրությունը կատարեց Մ. Սարյանի գլխավորած հանձնաժողովը (Էջմիածնի Մայր Աթոռի շինգրասենյակի արխիվ, գ. 16, թ. 5)։

30 Ա լ. Ս ա հ ի ն յ ա ն, Նոր նյութեր Էջմիածնի Մայր տաճարի կառուցվածքի վերաբերյալ («Էջմիածին», 1956, օգոստոս-սեպտեմբեր, էջ 61)։

31 Հ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգումը ավարտված է (նույն տեղում, 1955, սեպտեմբեր, էջ 32)։

32 Էջմիածնի Մայր տաճարի շինգրասենյակի արխիվ, գ. 16, թ. 18։

33 Հետագայում, Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության առաջին տարիներին, Մայր տաճարի ցինկապատ կտուրը փոխարինվեց սալաքարերին փված զոդման միջոցով իրար կցված արճճե թերթերով, որպիսիք և պահպանվում են ցայսօր։

Այդ բոլորի համար (որ կատարվեց մոտ մեկ տարում՝ 1954 թ. նոյեմբերից մինչև 1955 թ. հոկտեմբերը) Սովետական Հայաստանի կառավարությունը ներդրեց շուրջ 4 մլն ռ. (հին արժեքափով) միջոցներ, որից 1,7 մլն ռ. որմնաշարդերի մաքրման, ամրացման և լրացման համար[34]։

Վերը նկարագրածով Մայր տաճարի հիմնական վերանորոգման զուտ շինարարական-կոնստրուկտիվ մասի աշխատանքներն ավարտվեցին։ Սակայն դրանով անելիքները չսպառվեցին։ Հետագայում, օգտագործելով Գալուստ Կյուլպենկյան հաստատության տրամադրած միջոցները, Վազգեն Ա կաթողիկոսի անմիջական նախաձեռնությամբ ու շանքերով իրականացվեցին լրացուցիչ շինարարական աշխատանքներ, կատարվեցին տաճարի ներսի պեղումները, հիմնական բարեղարդումը և շրջապատի բարեկարգումը[35]։

ОСНОВНАЯ РЕСТАВРАЦИЯ СОБОРНОГО ХРАМА ЭЧМИАДЗИНА (1954—1955)

ВАРАЗДАТ АРУТЮНЯН

Резюме

В течение 1954—1955 гг. по инициативе и на средства правительства Армянской ССР были произведены фундаментальные реставрационные работы в Эчмиадзинском соборе. Проведенные зондажи на пилонах и арках выявили трещины аварийного характера, что требовало незамедлительных мероприятий по их укреплению. Последнее было осуществлено по проекту инженеров-конструкторов К. Алтуняна и Ж. Бейлеряна. Росписи храма (на стенах, потолках, арках и пилонах), принадлежащие кисти армянских художников рода Овнатанян и выполненные в конце XVIII и начале XIX вв., были сильно повреждены и местами вовсе выпали (по причине проникновения влаги). Работы по обновлению, восстановлению и дополнению росписей (общей площадью около 1500 м²) проводились большой группой молодых художников Армении под руководством видного исследователя древнеармянского изобразительного искусства Л. А. Дурново. Так как ранее проведенные ремонты каменной (из туфовых плит) кровли крыши не смогли обеспечить ее полную водонепроницаемость, было решено по проекту инженера Б. Данояна временно прибегнуть к покрытию кровельной жестью на деревянной обрешетке, а спустя несколько лет она была заменена покрытием свинцовыми листами по каменному настилу. Параллельно велись работы по ограждению и благоустройству монастырской территории. По проекту группы архитекторов, возглавляемой проф. С. Сафаряном, была построена северная ограждающая стена.

---

34 Հ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 28—35։

35 Կոնստանդին Հովհաննիսյանը («Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը Սովետական Հայաստանում», Երևան, 1978, էջ 94—101) համառոտակի բնութագրել է Մայր տաճարում կատարված աշխատանքները։